Պարույր Սևակ

Չղջիկը

1

Քարանձավն է նրա բույնը,
Եվ Չղջիկ է իր անունը:
Թևեր ունի
Նա թռչունի
Ու կարող է հանգիստ թռչել:
Բայց արի տես՝ կտո՛ւց չունի
Ու մկան պես գիտի կրծել:
Թռչունի թև, մկան ատամ,-
Ինքներդ ասեք՝եղավ ո՞րը:
Նաև կույր է երկու աչքով:
Ստեղծվել է ի՞նչ հրաշքով,
Ո՞վ է դրա մեղավորը:

2

Մեղավո՞րը:
Հիմա ասեմ:
Մեղավոր է
Թագավորը:

3

Կար ժամանակ, որ Չղջիկը,
Ուրախությամբ հոգին լիքը,

Պարզ երկնքի ազատ գրկում
Թռչում էր ու զվարթ երգում
Ծիծեռնակի, Ծտի նման,
Երբ մի օր էլ (ա՜խ այդ օրը),
Թռչունների թագավորը
Տվեց սաստիկ մի հրաման.
«Ինձ պատկանող երկնքի տակ
Ով թռչում է՝ հարկ պիտի տա»:
Երբ Չղջիկին հերթը հասավ,
Թևը ծալած՝ անվախ ասավ.
«Հրամանքդ ո՞նց ընդունեմ,
Եթե, նայի՛ր, կտուց չունեմ,
Նաև չունեմ մաշկիս փետուր:
Հա՞րկ ես ուզում, խնդրե՛մ, դե տուր
Նախ ինձ կտո՛ւց, նաև փետո՛ւր...
Հարկ ուզելը հե՛շտ է այնքան.
Հերիք է, որ լինես արքա:
Բանն էլ կտուց-փետուր տալն է,
Ոչ թե տանջանք ու տուր տալն է...
Վերջում, արքա՛,
Կասեմ այսքան.
Զո՛ւր է ամբողջ այս աղմուկը,
Ես թռչուն չեմ, տե՛ս, ես մուկ եմ»,-
Ու ցույց տվեց ատամները:
Արքայական դատարանի
Կաշառակեր անդամները
Կչկչացին. «Ծո՛ւտ, դո՛ւրս կորիր:
Ատա՞մ ցույց տալ... թագավորի՞ն...
Վա՛յ, հի՛ն օրենք,
Վա՛յ, լա՛վ օրեր,

Ո՞նց գնացիք,
Ո՞նց եք կորել,
Այս ո՞ւր հասանք,
Ի՞նչ խեղճ օրի»...
Նայեց արքան այդ բոլորին,
Որ կեղծ-անկեղծ դողում էին,
Իրենք թոչուն՝ սողում էին
Ոտքերի տակ իրենց պետի:
Բարկությունից գոռոզ արքան
Քիչ էր մնում իրեն ուտի,
Բայց դե ձեռքին ուրիշ ճար կա՞ր:
Ու թուղթ գրել տվեց արքան.
«Ո՛վ Մկների դու թագավոր,
Իմ սիրելի՛, իմ թա՛նկ քավոր:
Այսպե՛ս... այսպե՛ս՝ մի մուկ կա, որ
Քեզ կարծեմ թե հարկ չի տալիս:
Այդ ի՞նչ բան է»:
Թղթով գալիս
Ու տանում են Չղջիկ-Մուկին:
«Ի՞նչ մուկ, ի՞նչ բան...ե՛ս իմ հոգին.
Ես հո մուկ չեմ, ես թոչուն եմ:
Տեսե՛ք, ո՛չ մազ, ո՛չ պոչ ունեմ,
Բայց դրա տեղ թևե՛ր ունեմ:
Ձեր պահանջը ո՞նց ընդունեմ»...
4
Եվ այն օրից
Նո՛ր ու նորից
Ամբողջ կյանքում հալածվելով
Երկու դաժան թագավորից՝
Քարանձավ է խեղճը մտնում

Եվ այնքան է ապրում մթնում,
Որ զույգ աչքով կուրանում է,
Լույս ասածն էլ մոռանում է:
Կուրանո՛ւմ, բայց չի՛ կռանում
Արքաների ուժի առջև:
Կուրանո՛ւմ, բայց չի՛ մոռանում,
Որ ավելի լավ է կառչել
Քարանձավի խոնավ պատին,
Քան թե ամեն տեսակ պետի
Առաջ սողալ
Ու դողդողալ...
Ու քանի դեռ կա աշխարհում
Հարկ պահանջող ու հարկ տվող,
Նա մի՛շտ կապրի մեզնից հեռու,
Կապրի մի՛շտ իր ուզած ձևով,
Կույր կմնա,
Բայց կիմանա,
Թե մենք ոնց ենք իրեն խղճում,
Որ ո՛չ մուկ է, ո՛չ էլ թռչուն: